ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 622-Ա

20 հոկտեմբերի 2026 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 30-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջներն, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2024 թվականի հուլիսի 25-ի N 712-Ա հրամանը, ինչպես նաև Սիմոն Մանուկյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2026 թվականի հոկտեմբերի 22-ից 2026 թվականի հոկտեմբերի 29-ը ներառյալ (8 օր):

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանի չվճարվող արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրան կփոխարինի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Յուրա Մուշեղյանը:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանին՝ չվճարվող արձակուրդի ժամանակահատվածում բացակայելու վերաբերյալ համապատասխան փոփոխությունը կատարել Mulberry 2.0 էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի դրվածքներ բաժնում:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

4. Սիմոն Մանուկյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հոկտեմբերի 30-ից:

20.10.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840083

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ